ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 9-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24- րդ կետով,42 և 43- րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջներով,ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշման 3-րդ և 33-րդ կետերով, ՀՀ կառավարության 2005թ դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, հիմք ընդունելով <<ԱԿԱԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ի կողմից տրված ճշտված հողամասի և շինության հատակագիծը և Անահիտ Հովհաննեսի Ռամազյանի / մուտք՝ 29.01.2021 թիվ/ դիմումը՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 06-004-0011-0053 ծածկագրից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության 0.00302 հա մակերեսով հողամասում Անահիտ Հովհաննեսի Ռամազյանի կողմից 1997թ. ինքնակամ կառուցված 30.2քմ արտաքին մակերեսով ավտոտնակը ճանաչել համայնքային սեփականություն:
2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ ք.Թումանյան,2-րդ փողոց, թիվ 7/2 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության 0.00302 հա մակերեսով հողամասում Անահիտ Հովհաննեսի Ռամազյանի կողմից ինքնակամ կառուցված 30,2քմ արտաքին մակեսրեով ավտոտնակը ճանաչել օրինական:
3.Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը,վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի հակասում քաղաքաշինական նորմերին և համայնքի գլխավոր հատակագծի պահանջներին,այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր

սերվիտուտ, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4.Ինքնակամ կառույցի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված, այն դասելով բնակավայրերի հողամասերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և փոփոխությունը ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում ու համայնքի հողային հաշվեկշռում:
5. Օրինական ճանաչված ավտոտնակին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, ք.Թումանյան,2-րդ փողոց, թիվ 7/2 ավտոտնակ հասցեն:
6.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել գրավոր առաջարկություն սույն որոշման 1-ին կետում նշված
կառույցն իրականացրած Անահիտ Հովհաննեսի Ռամազյանին գնման նախապատվության իրավունքով,ուղղակի վաճառքի ձևով գնելու վերաբերյալ:
7.Հայաստանի Հանրապետության Կառավարության 08.05.2006թ.թիվ 912-Ն որոշման 35.1 կետի համաձայն սահմանված չափերով ձևավորված վաճառքի գնին հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ընդամենը 26000դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

20 21 թ. փետրվարի 11
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 10-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով՝

որոշում եմ.

Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Թումանյան քաղաքի 06-004-0012-0038-001-0011 կադաստրային ծածկագրի անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,ք.Թումանյան,2-րդ փողոց,շենք 6,բն.11:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

20 21 թ. փետրվարի 12
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 11-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,46-րդ հոդվածի 2-րդ կետով ,հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2020թ. հունվարի 17-ի <<Թումանյան համայնքի 2020թ. բյուջեն հաստատելու մասին>> թիվ 2 -Ն և Թումանյան համայնքի ղեկավարի 2021թ. հունվարի 22-ի <<Թումանյան համայնքի 2021թ. բյուջեի եռամսյակային համամասնությունները սահմանելու մասին>> թիվ 5 -Ա որոշումները՝
որոշում եմ.

1.Թումանյան համայնքի Թումանյան քաղաքում ս/թ փետրվարի 20-ին կազմակերպել 1941-1945թթ.Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցների և Արցախյան երկրորդ պատերազմում զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող խաչքարերի բացման արարողություն:
2.Թումանյանի համայնքապետարանի բյուջեի կառավարման ապարատի ներկայացուցչական ծախսերից /հոդված 4237/ հատկացնել 150000 ՀՀ դրամ՝ Խաչքարերի բացման արարողության կազմակերպման և հյուրասիրության համար՝ համաձայն 01.02.2021թ. թիվ 14 պայմանագրի:
3.Հանձնարարել<<Թումանյան քաղաքի մանկական արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի տնօրենին՝ Խաչքարերի բացման արարողությունը հանդիսավոր նշելու համար նախապատրաստել միջոցառման ծրագիր:
4.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ե. Շաքարյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

2021թ. փետրվարի 12
ք.Թումանյան